

**ՀՀ ԿԳՄՍՆ «ՄարտունուՆԸ Տ. Աբրահամյանի անվան ավագ  
դպրոց» ՊՈԱԿ**



**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

- Թեմա-** «ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ»
- Դպրոց-** ՄԱՐՏԻՐՈՍԻ ՄԻՋՆ.ԴՊՐՈՑ
- Ուսուցիչ-** ՄԱՌԱ ՀԱԿՈԲՅԱՆ
- Ղեկավար-** ԿԻՄԱ ՕՀԱՆԵՍՅԱՆ

**ՎԱՅՔ 2023**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| Ներածություն.....  | 3  |
| Գլուխ 1. Ուսուցման սկզբունքների էությունը և դերը կրթական գործընթացում.....   | 5  |
| Գլուխ 2. <i>Կրտսեր դպրոցում կիրառվող ուսուցման սկզբունքները, որպես ուսուցման գործընթացի արդյունավետության միջոց.....</i> | 8  |
| Եզրակացություն.....  | 18 |
| Օգտագործված գրականության ցանկ.....   | 19 |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ տարրական դպրոցը հանդիսանալով երեխայի կյանքի առաջին մեծ փոփոխությունը՝ ազդեցություն է ունենում նրա հետագա զարգացման, կյանքում առաջխաղացման և, որ ամենակարևորն է, կրթության նկատմամբ նրա առաջին պատկերացումները սկսում են ձևավորվել հենց այս ժամանակահատվածում: Դպրոցական տարիքի անցումը ուղեկցվում է այնպիսի փոփոխություններով, որոնք կապված են երեխայի գործունեության, հաղորդակցվելու, այլ մարդկանց հետ նրա հարաբերվելու ունակությունների հետ: Եթե մինչ դպրոցական տարիքը երեխայի գործունեությունը մեծապես կապվում է խաղալու, խաղերի միջոցով նորը ճանաչելու հետ, ապա տարրական դասարանից սկսվում է նրա սովորելու, նոր պարտականություններ ունենալու գործընթացը: Տարրական դասարաններում կիրառվող ուսուցման սկզբունքերի և դրանց առանձնահատկությունների ուսումնասիրումը եղել և շարունակում է լինել արդիական, քանի որ ուսումնասիրության ընթացքում վեր հանվող խնդիրները հնարավորություն են ընձեռում բացահայտելու այն արդյունավետ միջոցները, որոնք կնպաստեն տարրական դասարաններում դասվարի կողմից ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպմանը՝ հանգեցնելով երեխաների ուսման նկատմամբ առավել բարձր ակտիվության: Թեմայի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս ևս մեկ անգամ հետազոտելու և վեր հանելու կրթական գործընթացում դպրոցականների կարիքները և առաջադրելու այն մեխանիզմները, որոնցով դասվարը կկարողանա ճիշտ և նպատակային ազդել կրթական գործընթացի վրա՝ աշակերտի ակտիվությունը բարձրացնելու համար:

**Հետազոտության նպատակը՝** տարրական դպրոցում ուսուցման սկզբունքների կիրառման առանձնահատկությունների ուսումնասիրումն և արդյունավետ պայմանների առաջադրումն է:

**Հետազոտման խնդիրներն են.**

- բացահայտել ուսուցման սկզբունքների կիրառման առանձնահատկությունները տարրական դասարաններում,
- ուսումնասիրել սկզբունքների կիրառման մեխանիզմները կրտսեր դպրոցում,

○ բացահայտել ուսուցման սկզբունքների արդյունավետության պայմանները:

**Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը`** ավարտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը համակարգչային 18 էջ:

## **Գլուխ 1. Ուսուցման սկզբունքների էությունը և դերը կրթական գործընթացում**

Օրենքները և կանոնները, որոնք գործում են ցանկացած գիտության մեջ, արտացոլում են դրա օբյեկտիվ և կայուն կապերը: Վերջիններս ցույց են տալիս այդ գիտության զարգացման միտումները: Այնուամենայնիվ, այս օրենքները չեն պարունակում գործնական գործողությունների ուղղակի ուղեցույցներ: Դրանք հանդիսանում են այն տեսական հիմքերը, որոնց հիման վրա մշակվում է գործնական գործունեության տեխնոլոգիան: Մանկավարժության մեջ այսպիսին են հանդիսանում ուսուցման սկզբունքները, որոնք ուսուցչին ուղղորդում են սեփական գիտելիքները աշակերտին ճիշտ մատուցելու՝ փոխանցելու գործընթացում, օգնում են առավել մատչելի և նպատակային իրականացնել իրենց գործնական աշխատանքը: Ըստ Մ. Ա. Դանիլովի, ուսուցման սկզբունքների համակարգում կատարած ուսումնասիրությունները փաստում են այն մասին, որ դասավանդման գործընթացը զուտ գիտելիքների փոխանցումը չէ, որին տիրապետում է ուսուցիչը՝ փոխանցելով իր աշակերտին: Դասավանդման գործընթացում կարևորվում են այն ուղղորդող մեխանիզմները և միջավայրը, որոնց գործադրման արդյունքում ուսուցման բովանդակությունը յուրաքանչյուր աշակերտի համար վեր է ածվում անհատական ձեռքբերման [10, էջ 115]: Այսինքն ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այդ գործիքակազմի ճիշտ և համակարգված ընտրությամբ, որի վերջնարդյունքը երեխայի նոր գիտելիքների ձեռքբերումն է: Համաձայնելով ուսուցման գործընթացի վերաբերյալ Մ. Ա. Դանիլովի տեսակետի հետ, կարելի է գալ այն եզրահանգմանը, որ առանց ուսուցման գործընթացի գործիքակազմի ընտրության և դրանց կիրառման ուսուցչի կողմից գիտելիքների փոխանցումը աշակերտին չի կարող ունենալ համակարգված բնույթ, իսկ որպես վերջնարդյունք՝ ուսուցչի կողմից տրված գիտելիքը կլինի ոչ կիրառելի աշակերտի համար:

Ուսուցման սկզբունքներն ի հայտ են եկել մանկավարժական գիտության այն էտապում, երբ այն սկսել է համակարգել դասավանդման պրակտիկայում կուտակված փորձը, և ընդհանրացնել հաջողված ուսուցման էմպիրիկ գործոնները: Որպես պրակտիկայի նորմատիվ հասկացություն, ուսուցման սկզբունքները բնութագրվում են

ունիվերսալությամբ: Հետևաբար կարելի է պնդել, որ այն պարտադիր է ուսուցման ցանկացած էտապի, ցանկացած իրավիճակի համար, այն դեպքում, երբ նորմատիվային մնացյալ կատեգորիաները (մեթոդներ, պահանջներ, խորհուրդներ և խորհրդակցություններ, օրենքներ) չեն կրում այդքան պարտադիր բնույթ:[5,307] Ուսուցման սկզբունքները գիտելիքի փոխանցման ցանկացած ժամանակահատվածում՝ անկախ տարիքից, մատուցված նյութից և միջավայրից, առկա են ուսուցման գործընթացում: Այս սկզբունքները ուղեկցում են ուսուցչին իր գործունեությանը ողջ ընթացքում:

Սկզբունքը լատիներեն «պրինցիպում» բառն է, որը նշանակում է՝ հիմք [1, էջ 147]: Այսինքն ուսուցման սկզբունքները ուսուցման գործընթացի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պահանջներն են, որոնց իրագործումը հանգեցնում է գործընթացի ցանկալի արդյունավետությանը և երեխայի ներդաշնակ զարգացմանը: Ուսուցման սկզբունքներն անցել են զարգացման ու ձևավորման երկարատև ուղի: Մանկավարժության պատմությունը փաստում է այն մասին, որ ուսուցման սկզբունքները վաղուց հանդիսանում են դիդակտիկների ուսումնասիրման օբյեկտ: Հատկապես մեծ և արժեք է մանկավարժության դասականներ Յան Ամոս Կոմենսկու, Ի. Գ. Պետտալոցի, Ա. Դիստերվերգի, Ի.Ֆ. Հերբարտի, Կ.Դ. Ուշինսկու դերը ուսուցման սկզբունքների տեսության շարադրման մեջ: Այս մանկավարժներից շատերը ուսուցման սկզբունքները շարադրում են որպես «դիդակտիկ» կամ «դիդակտիկայի» սկզբունքներ: Հետևաբար ուսուցման սկզբունքների կիրառման խնդիրները լուծելն անհնար է առանց բացահայտելու այնպիսի հարցերի պատասխան ինչպիսիք են՝ ուսուցման սկզբունքների տեսության և դիդակտիկ ուսումնասիրությունների արդյունքում վեր հանված գիտական արդյունքների ընտրություն, ուսուցման սկզբունքի և դրա կառուցվածքի սահմանում:

Այսպես, Դ. Օ. Լորկիպանիձեն ուսուցման գործընթացում դիդակտիկայի ընդհանուր և հիմնարար պահանջների սահմանման համատեքստում հերքում է «դիդակտիկայի սկզբունքներ» տերմինը, հիմնավորելով, որ դիդակտիկան հանդիսանում է կրթության և ուսուցման տեսություն: Նրա սկզբունքները, այսինքն ելակետերը չեն կարող լինել հաջորդականության և սիստեմատիկության սկզբունքը, գննականության սկզբունքը և այլն:

Վերջիններս հանդիսանում են ոչ թե ուսուցման տեսության սկզբունքներ, այլ ուսուցման գործընթացի սկզբունքներ: [16, 185]

Վերլուծելով Լորկիպանիձեի տեսությունը կարելի է ասել, որ դիդակտիկ սկզբունքները և ուսուցման սկզբունքները չեն կարող հանդիսանալ նույն տերմինները, քանի որ վերջինս կիրառվում է ուսուցման գործընթացում, կրում է պրակտիկ բնույթ, այլ ոչ տեսական: Լորկիպանիձեի տեսությանը հակառակ Ջագվյազինսկին տալիս է դիդակտիկ և ուսուցման սկզբունքների տարբերության և փոխկապվածության հիմնավորումը: Ըստ Վ. Ի. Ջագվյազինսկու «դիդակտիկ սկզբունք» և «ուսուցման սկզբունք» տերմինների բովանդակության միջև անհամապատասխանությունը՝ կապված այն բանի հետ, որ այդ «... տերմիններն արտացոլում են նույն գիտելիքների գործունեության տարբեր մակարդակները: Հետազոտող-դիդակտիկի համար սկզբունքը հիմնականում հայտնվում է նրա իմացաբանական ֆունկցիայի մեջ, իսկ գիտական-պրակտիկայում՝ գործնականում վերափոխող գործառույթի մեջ: Առաջինի համար դա արդյունք է, երկրորդի համար (ինչպես նաև գիտնականը մեթոդաբանական համակարգ կառուցելիս) ելակետ է: Այս վերջին իմաստով ուսուցման սկզբունքը կենտրոնացված արտահայտություն է գիտական գիտելիքների արդյունքների պրակտիկայում»: [13, էջ 66 ] Այս դեպքում ուսուցման և դիդակտիկ սկզբունքները ոչ թե տարբերակվում, այլ փոխկապակցվում են միմյանց՝ ստեղծում տեսական և գործնական կապ: Այսինքն դիդակտիկ սկզբունքները տեսականից դեպի գործնական կիրառումը ստանում են ուսուցման սկզբունքների միջոցով, որոնք ուսուցիչը կիրառում է ուսուցման գործընթացն իրականացնելու համար: Այսպիսի իրարամերժ տեսակետներ են ներկայացնում մանկավարժության դասականներից շատերը և այդ սահմանումները արտացոլում են մանկավարժական գիտության և պրակտիկայի մեծ փորձը: Հենց այս պատճառով էլ հիմք ընդունելով դասական սահմանումները կարող ենք ձևակերպել ուսուցման սկզբունքների բուն էությունը:

## **Գլուխ 2: Կրտսեր դպրոցում կիրառվող ուսուցման սկզբունքները, որպես ուսուցման գործընթացի արդյունավետության միջոց**

Ուսուցման սկզբունքները ելակետեր են, «ուսուցչի գործունեության և աշակերտի ճանաչողական գործունեության բնույթը որոշելու...»:[7, էջ 62] Հետևաբար կարելի է պնդել, որ ուսուցման սկզբունքներն այն հիմնարար պահանջներն են, որոնց ապահովումը բերում է ուսուցչի կողմից գիտելիքի համակարգված փոխանցմանը, և այն աշակերտի կողմից ճիշտ ընկալմանն ու կիրառմանը: Այսինքն ուսուցման սկզբունքները հանդիսանում են դիդակտիկ օրենքների և օրինաչափությունների պրակտիկ կիրառման միջոցներ ուսուցման գործընթացում:

Ժամանակակից դպրոցում կիրառվում են ուսուցման զարգացնող և դաստիարակող, ակտիվության, գիտականության, կյանքի և պրակտիկայի հետ ուսուցման կապի, համակարգվածության և հաջորդականության, մատչելիության, գնականության, կայունության, գիտակցականության և պատասխանատվության սկզբունքները: [1, 148]

**Զարգացնող և դաստիարակող** սկզբունքը պահանջում է աշակերտի համակողմանի ու ներդաշնակ զարգացման հիմնախնդիրը անհատականացնել և այդ ուղիով լուծել մանկավարժության՝ այդ շատ խրթին հարցը:[1, 149] Այսինքն զարգացնող և դաստիարակող սկզբունքը ենթադրում է, որ աշակերտի զարգացումն ու դաստիարակումը պետք է ընթանա անհատական մոտեցմամբ, որը պայմանավորված է յուրաքանչյուր աշակերտի անհատականությամբ, նրա հոգեբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկություններով: Սկզբունքի կիրառումը դասվարին հնարավորություն կընձեռի երեխայի մոտ զարգացնելու ոչ միայն գիտելիքները, հմտությունները, որոնք փոխանցվում են ուսուցչից աշակերտին, այլ նաև տալիս է հնարավորություն երեխայի մեջ սերմանելու բարոյական և գեղագիտական որակներ, աշակերտի՝ որպես հասարակության համար պիտանի անձի ձևավորման: Դաստիարակող սկզբունքը արտացոլում է ուսուցման գործընթացի օբյեկտիվ օրենքները, այսինքն չի կարող լինել ուսուցում դաստիարակությունից դուրս: Անկախ այն բանից, թե դասվարը նպատակաուղղված է դաստիարակչական ազդեցություն ունենալ աշակերտի վրա, նա ուսուցանվող նյութի շրջանակներում ունենալու է դաստիարակչական ազդեցություն: Դաստիարակում է



կրթական նյութի բովանդակության, հաղորդված գիտելիքների նկատմամբ սեփական վերաբերմունքի մջոցով: Այս կրթական ազդեցությունը մեծապես ուժեղանում է, եթե ուսուցիչը համապատասխան խնդիր է դնում և ձգտում է արդյունավետ օգտագործել իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներն այդ նպատակով:

Այս սկզբունքը գործնականում իրականանում է հետևյալ կանոնների կիրառմամբ.

1. կարևորը ոչ թե առարկան է, որն ուսուցանվում է, այլ անձը, որը ձևավորվում է,
2. սովորեցնել և դաստիարակել այնպես, որ աշակերտը լինի ոչ թե օբյեկտ այլ սուբյեկտ,
3. անձի ձևավորումն իրականացնում է ուսուցիչն իր գործունեությամբ և անձով,
4. հաճախակի պետք է տալ ինչու՞ հարցը, որպեսզի մտածեն և գտնեն պատճառահետևանքային կապերը:

Ընդհանրացնելով վերը թվարկած կանոնները կարելի է պնդել, որ անհատի զարգացումը և դաստիարակումը իրականացվում է ոչ միայն աշակերտին մատուցվող նյութի շրջանակներում, այլ նրա զաքրգացումը ուղղակիորեն կապված է ուսուցչի գործունեության, նրան՝ որպես օրինակ տեսնելու հետ:

**Ակտիվության և գիտակցականության սկզբունքը** հիմնավորվում է ուսուցման գործընթացի իրականացման ընթացքում ուսուցուման և ընկալման փոխկապվածությամբ: Աշակերտների առանց ակտիվ և գիտակցված սովորելու ունակության ներդրման ուսուցումը չի կարող տալ ակնկալվող արդյունքները: [6, 37] Հետևաբար ուսուցման այս սկզբունքով առաջնորդվելը կարևորվում է իր դաստիարակչական հատկություններով, որոնք ուղղված են ձևավորելու գիտակից և ակտիվ անհատի՝ ով կարևոր դեր կստանձնի հասարակության զարգացման գործընթացում:

Ակտիվ և գիտակից ուսուցումը հնարավոր է դառնում, երբ գործընթացը կատարվում է ուսուցման հետևյալ պայմանների, կանոնների պահպանմամբ:

1. Առաջիկա աշխատանքի նպատակների և խնդիրների հստակ ընկալումը, դրանց կարևորությունն ու նշանակությունն անհրաժեշտ պայման է գիտակցված ուսուցման համար:

2. Անհրաժեշտ է դասավանդել այնպես, որ աշակերտը հասկանա, թե ի՞նչ, ինչու՞ և ինչպե՞ս անել, և երբեք մեխանիկորեն չկատարել կրթական գործողություններ՝ առանց դրանք նախ խորապես հասկանալու:
3. Յուրաքանչյուր բառի, նախադասության, հասկացության ընկալում, դրանց բացահայտում: Չպետք է ներկայացնել հասկացություններ, որոնք հետագայում չեն բացահայտվի:
4. Աշակերտների փոխադարձ ուսուցման ուժի օգտագործումը՝ ճիշտ պատասխան փնտրելու կոլեկտիվ ձևերի զարգացման պայմանների ստեղծում: Ընկերոջ ասածը հաճախ աշակերտները ավելի լավ են ընկալում, քան ուսուցչի բացատրությունը:
5. Անհայտը պետք է տրամաբանորեն կապված լինի հայտնիի հետ. Եթե չկա տրամաբանական կապ սովորած և յուրացված գիտելիքների միջև, չկա նաև գիտակցված ուսուցում:
6. Սովորելը ավելի հաջող կլինի, եթե յուրաքանչյուր կանոն ուղեկցվի օպտիմալ թվով օրինակներով, որպեսզի բավականաչափ պարզ դառնա, թե որքան բազմազան է դրա կիրառումը:
7. Ոչինչ չպետք է ուսուցանվի միայն հեղինակությամբ, բայց ամեն ինչ պետք է ուսուցանվի ապացույցների հիման վրա, որոնք հիմնված են զգացմունքի և բանականության վրա:
8. «Ինչու՞» հարցը պետք է հնարավորինս հաճախ օգտագործել՝ պատճառահետևանքային մտածել սովորեցնելու համար: Պատճառահետևանքային կապերի ընկալումը զարգացման ուսուցման անփոխարինելի պայմանն է:
9. Իրականում գիտի ոչ թե վերապատմողը, այլ գործնականում կիրառողը:
10. Անհրաժեշտ է անընդհատ ուսումնասիրել և օգտագործել ուսանողների անհատական հետաքրքրությունները, զարգացնելուղղորդելնրանցայնպես, որդրանքհամահունչլինենանձնականսոցիալականկարիքների:
11. Սովորեցնել ինքնուրույն մտածել և գործել: Խուսափել հուշումներից, վերապատմելուց և պատճենելուց:

12. Մշակել ստեղծագործական մտածողություն խնդիրների համապարփակ վերլուծության միջոցով, լուծել ճանաչողական առաջադրանքները մի քանի տրամաբանորեն տարբերակող ձևերով, ավելի հաճախ զբաղվել առաջադրանքներով:
13. Հարցեր տալու և պատասխաններ լսելու հմտությունը գործունեության խթանման և պահպանման կարևոր պայմաններից մեկն է: Ինչ հարց՝ նման պատասխան, ինչպես է ուսուցիչը լսում աշակերտին, այնպես որ աշակերտը լսում է ուսուցչին:[6, էջ՝ 37-38]

Այս բոլոր պայմանների ապահովումը բերում է ուսուցչի և աշակերտի միջև փոխկապվածությանը ուսուցման գործընթացում: Սկզբունքը հնարավորություն է ընձեռում ուսուցչին ճիշտ հարցադրումների միջոցով երեխայի մոտ զարգացնել սեփական հարցերի պատասխանը գտնելու, փնտրելու կարողությունը, ձևավորում որոշակի ինքնուրույնություն: Որքան ակտիվ է ներգրավված աշակերտը դասապրոցեսում, այնքան հետաքրքիր և ընկալելի է դառնում իր համար ներկայացվող նյութը: Միաժամանակ ուսուցման գործընթացում ակտիվություն պետք է ցուցաբերի ոչի միայն աշակերտը, այլև նաև ուսուցիչը, քանի որ նրա ակտիվությունից, նյութի գիտակից մատուցումից է կախված երեխայի մոտ նոր գիտելիքների ընկալումը, դրանց կիրառումը պրակտիկայում: Որպես օրինակ կարելի է ներկայացնել մաթեմատիկա առարկայի ընթացքում լուծվող խնդիրները: Եթե ուսուցիչը կարողացել է ճիշտ մատուցել նյութը, ապա երեխաները կկարողանան այդ գիտելիքների հիման վրա, գիտակցորեն ներդնելով և փոխկապելով նախորդ անցածները լուծել առաջադրված խնդիրը: Այսինքն տեսականը պրակտիկի վերածելու կարողության հիմքում պետք է դնել ուսուցման գիտակցականության սկզբունքը, երեխային օգնել գտնելու այն օրնաչափությունները, վերլուծելու այն փաստերը, որոնք նա հետագայում կկիրառի գործնականում:

**Ուսուցման գննականության սկզբունքը:** Այս սկզբունքի մասին առաջինը խոսել է Յ. Ա. Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատության մեջ: Կոմենսկին գննականություն ասելով հասկանում էր բոլոր զգայարանների մասնակցությունն իրերի ու երևույթների էությունն ավելի պարզ ու մատչելի ըմբռնելու համար: Վերջինս սահմանելով որպես դիդակտիկայի «ոսկե կանոն»: Ըստ Կոմենսկու, անհրաժեշտ է, որ աշակերտներին տրվեն ուսումնասիրության առրկաներ, այլ ոչ թե սովերները նրանց: «Ոսկե կանոնը», որը պետք է

պահպանեն բոլոր ուսուցիչները, հետևյալն է. «Ամեն բան պետք է ընկալելի լինի զգայարաններին, որքանով դա հնարավոր է: Այսօրինակ տեսանելին՝ աչքերի համար, լսելունը՝ լսելու ունակությանը, համը՝ համային ընկալմանը, գիտակցմանը՝ գիտակցելու ունակություններին: Եթե ինչ-որ բան կարող է միաժամանակ ընկալվել մի քանի զգայարաններով, ապա ներկայացրեք այդ առարկան միաժամանակ մի քանի զգայարանների»: [15, էջ՝ 2] Որպես օրնակ կարելի է նշել մաթեմատիկա առարկան, երբ ուսուցիչը աշակերտներին բացատրում է նոր թեմա, որն առնչվում է երկրաչափական որևէ պատկերի հետ: Այս դեպքում ցանկալի է, որ ուսուցիչը հնարավորություն ընձեռնի երեխային տեսնելու այդ պատկերը (օրինակ ուղղանկյունանիստի մասին խոսելիս կարելի է օրինակ բերել շենքը, դասասենյակը և այլն): Այսինքն այս սկզբունքի միձոցով մենք երեխային հնարավորություն ենք տալիս ոչ միայն նորը բացահայտելու՝ օգտագործելով ընդհամենը մեկ զգայարան, այլ գործի ենք դնում միանգամից մի քանի զգայարաններ: Վերջինիս միջոցով մատուցվող նյութը աշակերտի համար առավել ընկալելի և հեշտ կիրառելի է:

Կոմենսկին զննականության սկզբունքը և նշանակությունը ներկայացնում է հետևյալ կերպ.

1. եթե մենք ցանկանում ենք աշակերտին տալ իրական և կայուն գիտելիքներ, անհրաժեշտ է սովորեցնել նրան ամեն բան իր իսկ զգայարանների և ընկալումների միջոցով,
2. դպրոցները պետք է ապահովեն այն անհրաժեշտ միջոցներն ու պայմանները, որպեսզի աշակերտները անձամբ կարողանան ընկալել այն ամենը, ինչը շրջապատում է իրենց: Այս դեպքում մարդիք կազատվեն անընդհատ իրենց տանջող անհասկանալիից, անըմբռնելիությունից,
3. այն աշակերտն, ով մեկ անգամ ուսումնասիրել է մարդու անատոմիական կառուցվածքը սեփական աչքերով, այդ աշակերտն առավել լավ կհասկանա և կհիշի, քան նա ով ուղղակի լսել է ուսուցիչի ներկայացրածը: [23]

**Հաջորդականության և սիստեմատիկության սկզբունք:** Սկզբունքը պահանջում է մշտապես հետևել ուսումնական նյութի տրամաբանությանը, չխախտել երևույթների, առարկաների, իրադարձությունների միջև եղած օրնաչափ կապերը: [1, էջ՝ 152]: Տարրական

դասարաններում ուսուցումը սկսում ենք ոչ թե տառերը կամ թվերը երեխաներին սովորեցնելուց, այլ որոշ պատկերներից, մասնիկներից: Տարրական դասարանի երեխան սկզբում սովորում է առարկաների անունները, որոշ երկրաչափական պատկերների անուններ, որից հետո սկսում ենք սովորեցնել տառերը և թվերը: Այստեղ և ուսուցման գործընթացի ողջ ընթացքում ևս շարունակում ենք կիրառել հաջորդականության սկզբունքը, որին զուգահեռ ամեն անգամ նորը բացահայտելով մենք երեխային պետք է հիշեցնենք նախորդ անցածի վերաբերյալ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրկնությունը, նախորդ անցածի հիշեցումը երեխաների մոտ ստեղծում են մնայուն գիտելիքներ, առարկայական կապերը հնարավորություն են տալիս չխզել և ամրացնել ունեցած գիտելիքի պաշարները:

Գործնականում հաջորդականության և սխստեմատիկության սկզբունքն իրականացվում է վերապատրաստման բազմաթիվ կանոնների պահպանմամբ, որոնցից ամենակարևորները հետևյալներն են.

1. Անհրաժեշտ է օգտագործել սխեմաներ և պլաններ, ինչպես նաև ուսումնասիրված նյութի պարունակությունը բաժանել տրամաբանորեն լրացված մասերի:
2. Աշակերտների համար ծրագրի յուրաքանչյուր կետի և հարցի մանրակրկիտ բացահայտում և քննարկում:
3. Պետք է հիշել, որ պատմության և տրամաբանության տեսանկյունից այն, ինչ տարրական է և պարզ, հաճախ ամենադժվարն է գիտակցական ձուլման համար:
4. Անհրաժեշտ է կազմել «օժանդակ» նշումներ, ուսումնական նյութի կառուցվածքային և տրամաբանական սխեմաներ, որոնք նպաստում են գիտելիքների յուրացման գործընթացին:
5. Կրկնել սովորածը ոչ միայն դասի ժամանակ, դասի սկզբում և ոչ միայն վերջում՝ ստացված տեղեկատվությունը համախմբելու համար, այլև յուրաքանչյուր տրամաբանորեն ավարտված դասընթացի վերջում:
6. Հետևել արտահայտչական ձևերին և մեթոդներին:

7. Համակարգը հասկանալը պահանջում է տրամաբանություն, իսկ դրա ձևավորումը՝ զգացմունքներ և հույզեր: Հասկացությունները բացատրում են, պատկերները գրավում են, խթանները դառնում են գործողություն:
8. Դասընթացի բաժնի վերջում պահանջվում են ընդհանրացումներ և համակարգումներ:
9. Կարևոր է սովորեցնել և ընտելանալ սեփական սխալների համակարգված վերլուծությանը, գիտելիքների ձևավորված համակարգը դրանց մոռացումը կանխելու ամենակարևոր միջոցն է: Մոռացված գիտելիքները համակարգում արագ վերականգնվում են՝ առանց մեծ դժվարությունների:

**Գիտականության սկզբունք**նուսուցիչն իրագործում է կրթության բովանդակության հիմնական փաստաթղթերի՝ ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, միջոցով: Հասկանալի է, որ այդ փաստաթղթերը կառուցվում են գիտականության սկզբունքով, ելնելով հասարակության և գիտատեխնիկական առաջընթացի՝ դպրոցին ներկայացվող պահանջներից ու միտումներից: Այս սկզբունքը (գիտականության) ուսուցչի առջև խնդիր է դնում ուսումնական առարկաների միջոցով սովորողներին յուրացնել տալ տվյալ առարկայի հիմունքները, նրա բոլոր բաժինները, ուսումնասիրվող առարկայի և գիտությունների կապերը, ծանոթացնել գիտական նոր փաստերին, օրենքներին, տեսություններին, գիտություններին, տեխնիկայի նվաճումներին: [6, էջ՝ 35] Ուսուցման գիտականության սկզբունքն ուսուցչից պահանջում է սովորողներին հաղորդել ճշգրիտ, փաստարկված, ապացուցելի գիտելիքներ, գիտական որոնումների տարրեր, ծանոթացնել գիտությունների գիտահետազոտական մեթոդներին, ուսումնական աշխատանքի գիտականորեն կազմակերպման մեխանիզմներին: Ամեն կերպ զարգացնել սովորողների որոնողական աշխատանքներ կատարելու ընդունակությունները: Արթնացնել նրանց հետաքրքրությունները ուսումնասիրվող երևույթների նկատմամբ: Գիտականության սկզբունքը խնդիր է դնում ուսուցման գործընթացում (կոնկրետ դասերի ընթացքում) սովորողներին առաջադրել ուսումնական պրոբլեմներ, ստեղծել պրոբլեմային իրավիճակներ և նրանց մտավոր ուժերով լուծել,

հաղթահարել դրանք ու այդ ուղիով զարգացնել նրանց ճանաչողական ընդունակությունները:

**Քննարկենք ամրության սկզբունքը:** Ամրության սկզբունքի հիմքում ընկած է նյութի մանրակրկիտ ուսումնասիրությունը և դրա յուրացումը: Ուսումնական նյութի յուրացման ամրությունը կախված է ոչ միայն օբյեկտիվ գործոններից՝ նյութի բովանդակությունից և կառուցվածքից, այլև սուբյեկտիվ վերաբերմունքից՝ կրթական նյութի, բովանդակության, ուսուցչի նկատմամբ: Նշենք՝ որքան կարևոր և հետաքրքիր է կրթական նյութը, այնքան ամուր է ամրագրվում և ավելի երկար է պահպանվում այն աշակերտների հիշողության մեջ: Կրթական գործունեության մեխանիզմների ժամանակակից ըմբռնումը, նոր մեթոդների կրառումը հանգեցնում է գիտելիքների տեսական յուրացման: Անհրաժեշտ է օգտագործել տարբեր հուշագրական մեթոդներ, որոնք հեշտացնում են անգիր անելու ընթացքը: Պետք է խուսափել աշխատանքի թեթև և միապաղաղ տեսակներից, դրանք քիչ են զարգացնում և արագ են հոգնեցնում [7, էջ 22]: Ուսուցիչը պետք է կարողանա դասը վարել հետաքրքրաշարժ մեթոդների ներդրմամբ, ձայնը չպետք է լինի միատոն, ներկայացվող նյութը պետք է ուղեկցվի առարկայական ներկայացմամբ, որպեսզի երեխայի մոտ զարգանա և՛ տեսողական, և՛ լսողական հիշողությունը՝ որքան հնարավոր է համաչափ:

**Ուսուցման մատչելիության սկզբունքը** դիդակտիկ գործընթացի կազմակերպման և իրականացման համապատասխանությունն է աշակերտների զարգացման և պատրաստվածության մակարդակին, նրանց անհատական առանձնահատկություններին, տարիքին: Ժամանակակից կրթության տեսությունն ու պրակտիկան ընդլայնում են կրթության հասանելիության կանոնների ցանկը, որոնք պետք է իրականացվեն.

1. Ուսումնասիրվող ամեն ինչ պետք է բաշխվի ըստ տարիքային փուլերի. Այն, ինչ պետք է ուսումնասիրել, այն է, ինչը մատչելի է ընկալման յուրաքանչյուր տարիքում:
2. Անհրաժեշտ է հաշվի առնել աշակերտների կյանքի փորձը, նրանց հետաքրքրությունները, զարգացման առանձնահատկությունները:
3. Անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի անհատական ուսուցման ունակության աստիճանը, աշակերտներին միավորել տարբերակված ենթախմբերում՝ հաշվի առնելով նրանց ուսման մակարդակը:

4. Սովորելը պահանջում է որոշակի լարվածություն: Երբ այն բացակայում է, աշակերտները կորցնում են ամբողջ ուժով աշխատելու սովորությունը:
5. Հասանելիության համար պետք է լայնորեն օգտագործել անալոգիան, համեմատությունը, գուգադիպումը, հակադրությունը:
6. Յուրաքանչյուր նոր հայեցակարգի ներդրումը ոչ միայն տրամաբանորեն պետք է բխի դրված ճանաչողական առաջադրանքից, այլև պատրաստվի վերապատրաստման նախորդ ամբողջ ընթացքից:
7. Հասանելիությունը կախված է ներկայացման հստակությունից, ձևակերպման հստակությունից, վառ պատկերագրողումից, փաստերի օգտագործումից, կյանքից օրինակներից, գրականությունից:
8. Հասանելիությունը կապված է կատարման հետ. պետք է ավելի ու ավելի երկար և ինտենսիվ մտավոր գործունեություն իրականացնել: Արդյունավետությունը բարձրացնելով՝ իջեցնում է սովորելու մատչելիության խոչընդոտը:[6, էջ36]

**Կյանքի և պրակտիկայի հետ ուսուցման կապի սկզբունքը** ուսուցչից պահանջում է ուսուցման նյութի ուսումնասիրումը կապել առօրյա կյանքի, երևույթների, տնտեսության առկա խնդիրների հետ: Ուսուցիչը պետք է ուսուցման գործընթացը այնպես կառուցի, որ ձեռք բերված գիտելիքները կիրառվեն կյանքում, գործնականում: Օր.՝ տեխնոլոգիա դասի շրջանակներում ուսումնասիրվող խառատները և դրանց կառուցվածքը ուսումնասիրելուց հետո կարելի է դպրոցի արհեստանոցում փայտից որևէ դետալ պատրաստել, աշխարհագրություն առարկայի շրջանակներում կարող են կողմնացույցի օգնությամբ որոշել իրենց բնակավայրի տեղադիրքը և այլն: Աշակերտները ավելի լավ կըմբռնեն տեսության և գործնականի կապը, միասնությունը: Գործնականն օգնում է հասկանալ տեսությունը, այն գիտության զարգացման շարժիչ ուժն է: Այս սկզբունքի հիմքում ևս կարելի է դիտարկել Կոմենսկու «ոսկե կանոնը», միայն մեկ տարբերությամբ, որ սկզբունքն իրականանում է այն դեպքում, երբ երեխան տիրապետում է նյութի տեսական մասին, որից հետո այն կիրառում, դարցնում առարկայական:

Հետևյալ կանոնների ստեղծագործական կիրառումը կնպաստի այս սկզբունքի իրականացմանը.



1. Պրակտիկայով ապացուցել երեխաներին գիտական գիտելիքների անհրաժեշտությունը:
2. Ցույց տալ, որ գիտությունը զարգանում է պահանջարկի ազդեցության տակ:
3. Պատմել երեխաներին գիտական նորությունների, նոր տեխնոլոգիաների մասին:
4. Սովորեցնել կիրառել սովորածը պրակտիկայում:
5. Կապեր հաստատել սովորածի և ապագա մասնագիտության միջև:
6. Աշակերտներին ակտիվ ներգրավել հանրագուտ աշխատանքի մեջ:
7. Հիշել, որ պրակտիկ գործունեության շնորհիվ յուրացվում է գիտելիքների 80 տոկոսը:[1, էջ151]

Ուսումնառության իրական գործընթացում դիտարկված սկզբունքները գործում են միմյանց հետ փոխազդեցության մեջ, ինչպես նաև ուսման օրենքները, որոնց հիման վրա են ձևակերպվում և գործում են որպես անբաժանելի համակարգ: Հետևաբար, սկզբունքներից որևէ մեկը ձեռք է բերում իր իրական իմաստը միայն այլ սկզբունքների հետ կապված: Դրանք միաժամանակ ենդրսևորվում ուսումնական գործընթացի յուրաքանչյուր փուլում: Գիտակցությունը գործունեության հիմքն է. հետեւողականությունը ապահովում է մատչելիությունը, իսկ մատչելիությունը՝ պարտաճանաչությունն ու ուժը և այլն: Ուսուցման սկզբունքների միայն համակցված գործողությունն է ապահովում իր առաջադրանքների ճիշտ սահմանում, բովանդակության ընտրություն, ինչպես ուսուցիչների, այնպես էլ ուսանողների առավել նպատակահարմար գործունեության ձևերի, մեթոդների և միջոցների ընտրություն: Ուսուցման մեջ որոշ սկզբունքների կարևորությունը չափազանցնելը և մյուսների դերը թերագնահատելը բերում է դրանց արդյունավետության նվազմանը:

## Եզրակացություն

Ամփոփելով հետազոտական աշխատանքը կարելի է գալ այն եզրահանգմանը, որ ուսուցման սկզբունքների համակցված և նպատակային կիրառումը հնարավորություն կնձեռի հասնելու այն խնդիրների լուծմանը, որոնք դրված են տարրական դասարաններում դասավանդող ուսուցչի գործունեության հիմքում: Զարգացման ժամանակակից պայմաններում առողջ սերունդ դաստիարակելու խնդիրն ամբողջապես ընկած է դպրոցի և ընդհանրապես կրթական համակարգի վրա: Հատկապես տարրական դասարանում մեծ նշանակություն է տրվում երեխայի սոցիալ-մշակութային դաստիարակությանը, որը պետք է համընթաց լինի ժամանակի հետ, իր մեջ կրի ազգայինը՝ շաղկապված լինելով ժամանակի թելադրող արժեքների հետ: Որքան կրթված և զարգացած է սերունդը, այդքան առաջընթաց կկարողանա ապրել երկիրը: Իսկ ուղղորդված և ժամանակին համահունչ կրթության ապահովվումը մեծապես կապված է ուսուցչի կողմից ուսուցման գործընթացի կազմակերպման ընթացքում ճիշտ գործիքակազմի ընտրությունից, այդ ամենի նպատակային կիրառումից: Ուստի ուսուցման սկզբունքների նպատակային կիրառումը չի կարող իր ազդեցությունը չունենալ երեխաների կրթության որակի, դաստիարակված և գիտակից սերունդ ունենալու գործում: Հետևաբար ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպելու ընթացքում ճիշտ ընտրված ուսուցման սկզբունքը կամ սկզբունքների նպատակային համակցումը կհանգեցնի այն խնդիրների լուծմանը, որոնք ելակետային և արդյունավետ են ուսուցչի, աշակերտի համար, հեռանկարային են ապագայում գիտակից սերունդ ունենալու գործում:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. Ս., «Մանկավարժություն», «Մանկավարժ» հրատ., Երևան, 2005թ., 455 էջ
2. Ասատրյան Լ., Ասատրյան Ջ., Հակոբյան Ա., Սաֆարյան Ն., «Մանկավարժության պատմություն», «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2020թ., 592 էջ
3. Андреев В. И. Педагогика: Учебный курс для творческого саморазвития / Казань Центр инновационных технологий, 2000. –608 с.
4. Бабанский Ю. К. Избранные педагогические труды. – 1989, 560 с.
5. Баранов С.П. Принципы обучения: Лекции по дидактике. М.: МГПИ, 1975.-94 с.
6. Данилов М. А. и др. Дидактика. — 1957, с. 517.
7. Загвязинский В. И. Методология и методика дидактического исследования. — 1982, с. 160.
8. Казанский Н.Г., Назарова Т.С. "Дидактика (Начальные классы)", Москва, изд. "Просвещение", 1978 г., 224 с.
9. Коменский Я.А. Великая дидактика. Избранные педагогические сочинения. М., 1982. 3.
10. Недвецкой М.Н, Педагогика, краткий курс, под ред, М. 2013, с. 408
11. Подласый И. П., "Педагогика", кн.1, Москва, изд. "ВЛАДОС", 2003г., 576 с.
12. Ушинский К.Д., "Педагогические сочинения", т. 1, Москва, изд. "Учпедгиз" 1953г., 637с.
13. <https://www.sites.google.com/site/somojajt/portret-pedagoga/pedagogiceskie-vzglyady/principy-pravila-logika-obucenia-i-vozpitania>